ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 27-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 01.02.2020Թ. ԹԻՎ 5-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ոստիկանության ղեկավար կազմում տեղի ունեցած կադրային փոփոխություններով պայմանավորված, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 11.06.2018թ. «ՀՀ ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշման 20-րդ կետի 5-րդ և 8-րդ ենթակետերի պահանջները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ ոստիկանության պետի 01.02.2020թ. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործունեության բնագավառների, գործառույթների և դրանք ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների, ոստիկանության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների գործունեության համակարգումը ՀՀ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարի և նրա տեղակալների միջև բաշխելու, ինչպես նաև ՀՀ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 03.12.2019թ. թիվ 25-Լ և թիվ 26-Լ հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 5-Լ հրամանով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հրամանը ծանոթացնել ՀՀ ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին:

ԳՆԴԱՊԵՏ Վ.ՂԱԶԱՐՅԱՆ

«06» օգոստոսի 2020թ.
քաղ. Երևան

«Հավելված
ՀՀ ոստիկանության պետի
« 06 » օգոստոսի 2020թ.
թիվ 27 - Լ հրամանի

Հավելված
ՀՀ ոստիկանության պետի
ժամանակավոր պաշտոնակատարի
« 01 » փետրվարի 2020թ.
թիվ 5 - Լ հրամանի

ՑԱՆԿ

ՀՀ ոստիկանության գործունեության բնագավառների, գործառույթների և դրանք ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների, ՀՀ ոստիկանության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների գործունեության համակարգման

1. ՀՀ ոստիկանության պետ, գնդապետ Վ.Ղազարյան.

1) Բնագավառներ. ոստիկանության օպերատիվ-հետախուզական ստորաբաժանումների գործունեության աջակցության ապահովում, ոստիկանության ստորաբաժանումների գործունեության օրինականության նկատմամբ հսկողություն, ծառայողական կարգապահության և օպերատիվ-ծառայողական գործունեության նկատմամբ ընդհանուր վերահսկողություն, հանձնարարականների կատարման նկատմամբ հսկողություն, կադրային քաղաքականության մշակում ու վարում, հասարակայնության հետ կապեր և ՀԼՄ-ների հետ համագործակցություն, գործավարության կազմակերպում, գաղտնիության ռեժիմի ապահովում, հերթապահ մասերի գործունեության կազմակերպում, արարողակարգի ապահովում:

Ստորաբաժանումներ. ՀՀ ոստիկանության շտաբ (ոստիկանության պետի տեղակալների համակարգմանը չհանձնված մասով), օպերատիվ-փնտրողական վարչություն, ներքին անվտանգության վարչություն, կադրային քաղաքականության վարչություն, գործավարության և գաղտնիության ռեժիմի ապահովման վարչություն, հասարակայնության հետ կապի և լրատվության վարչություն:

2) *Բնագավառներ.* հասարակական կարգի պահպանություն և հասարակական անվտանգության ապահովում, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում, համայնքային ոստիկանության գործունեության համակարգում, զորահավաքային աշխատանքներ և քաղաքացիական պաշտպանություն, լիցենզավորման և թույլտվության աշխատանքների կազմակերպում, տրանսպորտային միջոցների պետական գրանցման և պետական հաշվառման իրականացում, վարորդական վկայականների տրամադրում, ձերբակալված ու կալանավորված անձանց պահման և ուղեկցման կազմակերպում, հաշվառված անչափահասների մշտադիտարկում և ընտանիքում բռնության կանխարգելում:

Ստորաբաժանումներ. ՀՀ ոստիկանության շտաբ (ձերբակալված ու կալանավորված անձանց պահման մասով), հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչություն, «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն:

Գործառույթներ. ՀՀ ոստիկանության պետի համակարգման տակ գտնվող կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությամբ նախատեսված գործառույթներ:

2. ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա.Հովհաննիսյան.

Բնագավառներ. ոստիկանության օպերատիվ-հետախուզական գործունեություն, հանցավորության պետական վիճակագրության և տեղեկատվական հաշվառումների վարում:

Ստորաբաժանումներ. ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչություն, ինֆորմացիոն կենտրոն:

Գործառույթներ. ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալի համակարգման տակ գտնվող կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությամբ նախատեսված գործառույթներ:

3. ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյան.

1) Բնագավառներ. ֆինանսական գործունեություն, հաշվապահական հաշվառում, ոստիկանության ծառայողների սոցիալական ապահովություն, գնումների կազմակերպում, գերատեսչական գույքի կառավարում, ներքին աուդիտի կազմակերպում, բժշկական օգնության կազմակերպում, կապ և տեղեկատվական տեխնոլոգիաներ:

Ստորաբաժանումներ. ՀՀ ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչություն, տնտեսական վարչություն, բժշկական վարչություն, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն:

2) Բնագավառներ. Կազմակերպական գործունեություն, միջազգային համագործակցություն (բացառությամբ՝ Ինտերպոլի գծով և իրավական փոխօգնության հարցերով միջազգային համագործակցության), իրավաստեղծ գործունեություն, վարչաիրավական գործունեություն, դատական ներկայացուցչության ապահովում, հետաքննության կազմակերպում, կրթական գործունեություն, ՀՀ քաղաքացիության, օտարերկրացու կացության կարգավիճակի, մուտքի վիզայի տրամադրման, ընտրողների ռեգիստրի վարման հարցերով վարչարարության կազմակերպում, մարտական և ֆիզիկական պատրաստականություն:

Ստորաբաժանումներ. ՀՀ ոստիկանության շտաբ (կազմակերպական գործունեության, միջազգային համագործակցության և հետաքննության կազմակերպման մասով), իրավաբանական վարչություն, անձնագրային և վիզաների վարչություն, ոստիկանության կրթահամալիր, մարտական և ֆիզիկական պատրաստականության բաժին:

Գործառույթներ. ՀՀ ոստիկանության պետի տեղակալի համակարգման տակ գտնվող կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությամբ նախատեսված գործառույթներ:»

4. ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա.Մարտիրոսյան.

Բնագավառներ. օբյեկտների պետական պահպանություն, ոստիկանության ինտերպոլի գծով և իրավական փոխօգնության հարցերով միջազգային համագործակցություն, փորձաքննությունների և գիտատեխնիկական հետազոտությունների կատարում:

Ստորաբաժանումներ. ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչություն, ՀՀ-ում Ինտերպոլի Ազգային կենտրոնական բյուրո, փորձաքրեագիտական վարչություն:

Գործառույթներ. ՀՀ ոստիկանության պետի տեղակալի համակարգման տակ գտնվող կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությամբ նախատեսված գործառույթներ:

5. ՀՀ ոստիկանության զորքերի հրամանատար, ոստիկանության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար, գնդապետ Գ.Դալլաքյան.

Բնագավառ. ՀՀ ոստիկանության զորքերի գործունեության կազմակերպում և ղեկավարում:

Ստորաբաժանում. ՀՀ ոստիկանության զորքեր:

Գործառույթներ. ՀՀ ոստիկանության զորքերի հրամանատար, ոստիկանության պետի տեղակալի համակարգման տակ գտնվող կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրությամբ նախատեսված գործառույթներ: